



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 12 ՓԵՏՐՈՒԿ, 2018

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո լամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ

Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ ինձգիմ մաքուր պահել,
եթէ ոչ՝ քու խօսքերդ գործադրելով:
Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի հնազանդիլ.
մի՛ ձգեր որ պատուիրաններէդ խոտորիմ:
Խօսքդ սրտիս մէջ պահեցի,
որպէսզի չըլլայ որ քեզի դէմ մեղանչեմ:
Օրհնեալ ես դուն, Տէր,
ստրկեցուր ինձի քու կանոններդ:
Շրթնունքներս անդադար պիտի կրկնեն
քերնէդ դուրս եկած ամէն մէկ վնիռ:
Հանոյ՛ կ'առնեմ պատուիրաններդ կատարելէն,
բոլոր տեսակի հասարտութիւններէն աւելի:
Հրահանգներդ են մտածումիս առանցքը,
ուսուցումներդ՝ ուշադրութեանս առարկան:
Կանոններդ են ինձի հանոյ՛ տուողը,
եւ խօսքերդ բնաւ պիտի չմոռնամ:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆԵՐԻ ՆԱՄԱԿԷՆ

2:10-22

ՍՈՒՏ ՈՒՍՈՒՑԱՆՈՂՆԵՐԷՆ ԶԳՈՒՇԱՆԱԼ (2:10-22)

Շարունակելով մեր նիւթը, Պետրոս Առաքեալ յարակ, մէկին եւ խստութեամբ կ'անդրադառնայ այս հարցին, զգուշացնելով իր հաւարացեալները սուր ու մոլար վարդապետութիւններէ: Եթէ ուզենք հարց տալ պահ մը, թէ արդեօք ինչո՞ւ Պետրոս Առաքեալ այս ոճով, քիչ մը խիստ, կ'անդրադառնայ եւ կը ներկայացնէ այս հարցը, որովհետեւ պարզականութիւնն ու պարզաւորութիւնը ունի որպէս հովիւ հովուելու Քրիստոսի հօրը: Պահ մը երեւակայենք, ինչպիսի՞ ոճ ու ձեւ պիտի որդեգրէր հովիւ մը երբ տեսներ թէ ինչպէս գայլեր կու գան յափշտակելու իր գառները կամ ոչխարները: Մեղմութեամբ, կամ խստութեամբ: Եւ կամ, մենք որպէս ծնողներ, երբ տեսնենք, որ մեր զաւակները մոլար ու սխալ ճամբաներով կ'երթան, ականջ տալով մոլորեցուցիչ, կործանիչ խօսքերու, հետեւելով սխալ ճամբաներու, ինչպիսի՞ ոճ պիտի օգտագործէինք: Որքան առաւել եւս, Պետրոս Առաքեալ, որպէս հոգիներու հովիւ, որուն պարզականութիւնն արտօնուած էր նոյնիսկ ճշմարիտ ու Միակ Հովիւէն՝ Քրիստոսէն հովուելու, արածելու Իր հօրը, եւ հեռու վանելու այն գայլերը, որոնք այդ հօրին շուրջ կը դառնան յափշտակելու, կործանելու Քրիստոսի փոքրիկ հօրը:

Ահա այս հարուածով Պետրոս Առաքեալ կը նկարագրէ թէ ինչպիսիք են այս սուր ու մոլար ուսուցիչները.

1. Աստուծոյ փրկութիւնը արհամարող:
2. Ինքնահաւան, յանդուգն:
3. Չեն վախնար հոգեղէն փառաւոր էակները անարգելէ:
4. Անոնք իրենց չհասկցած բաները կ'անարգեն:
5. Անոնք կը նմանին անբան անասուններու, որոնք միայն իրենց կիրքերով ու ցանկութիւններով կ'առաջնորդուին, մինչ իրենց հոգին ու միտքը ապականած է:
6. Հաճոյք կ'առնեն իրենց զեղիս ցանկութիւնները կարարելէ:
7. Հաւարացեալներու հաւաքոյթի սեղանները կը պղծեն եւ կ'արաւարտուն իրենց խաբէբայութիւններով:
8. Իրենց աչքերը շնացող կիներ միայն կը փնտռեն եւ չեն յագենար մեղք գործելէ:
9. Տկար մարդիկ կը փնտռեն խափելու համար:
10. Իրենց խելք ու միտքը դրամ դիզել է: Օրինակ՝ Բաղասամի նման:
11. Անոնք ցամքած աղբիւրներ են, այսինքն՝ անոնց մէջ կենդանի ջուր չկայ, ինչպէս խոսքացած էր Քրիստոս. «**Անոր սիրտէն կենսաբար ջուրի գետեր պիտի ըլլին: Յիսուս ասիկա կ'ըսէր Սուրբ Հոգիին համար, որ իրեն հաւարացողները պիտի ընդունէին**» (Յովի 7:38-39):
12. Անոնք հովերէն քշող մշուշներ են: Չեն անձրեւեր: Առաւել եւս անոնք երկմիտ են: Յարակութիւն չունին:
13. Իմաստէ գուրկ մեծ-մեծ խօսքեր կը խօսին եւ մարմնական անառարկ ցանկութիւններ գրգռելով՝ կը մոլորենցեն:
14. Ազատութիւն կը խոստանան, մինչ այդ իրենք գերի են կորուստի փանող մոլութեանց:

Այսպիսիներուն համար Աստուած խաւար աշխարհի յաւերժական աղջամուղջը վերապահած է: Պետրոս Առաքեալ նաեւ կը յիշեցնէ եւ կը զգուշացնէ, ըսելով. «**Անոնք որոնք մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը ճանչնալով՝ աշխարհի պղծութիւններէն անգամ մը հեռանալէ ետք վերստին նոյն պղծութիւններուն մէջ կ'իյնան, անոնց վիճակը նախկինէն շար աւելի գէշ կ'ըլլայ: Աւելի լաւ կ'ըլլար՝ որ անոնք բնաւ ճանչցած չըլլային արդարութեան ճամբան, քան թէ ճանչնալէ ետք՝ հեռանային իրենց ասանդուած սուրբ պարտիրանէն**» (20-21 հմբ): Այս հարուածը կը յիշեցնէ Քրիստոսի այն խօսքը, երբ խօսեցաւ չար ոգիին վերադարձին մասին. «**Այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն աւելի գէշ կ'ըլլայ**» (Ղուկ 11:24-26):

Ի վերջոյ, Պետրոս Առաքեալ մէջբերելով Առակաց գիրքէն, այս մարդիկը կը նմանցնէ «**Շունը իր փսիսածին կը դառնայ**» կամ «**Խոզը որքան ալ լուսա՝ փիղմին մէջ կը թաւալի**» (Առակաց 26:11):

Հարցում: Այսօր կրնա՞նք այսպիսի ոճով ներկայանալ հանրության: Որքանո՞վ պարբերաբար այսպիսի բաներ եւս լսելու: Մարդիկ պիտի հանդուրժե՞ն: Յանկարծ, մարդիկ, մեզ լսողները, մեզ ինչպե՞ս պիտի ընդունին կամ մեզ մերժեն: Որ մէկը ատելի լաւ է: Հոս ընդունուիլ, վերը մերժուիլ: Հոս մերժուիլ եւ վերը ընդունուիլ: Ուրեմն, ունի՞նք քաջութիւնը ըլլալու Աստուածաշնչական քրիստոնէայ, եւ կամ անուանի քրիստոնէաներ ենք: Ահա մարտահրաւերը մեր դիմաց դրուած: Այո դիւրին չէ այսպիսի ոճով ներկայանալու այսօրուան ընկերության: Աւելի դիւրին է խօսելու մեր ծրագիրներուն, մեր յաջութիւններուն մասին, քան Աստուածաշնչական ճշմարտութիւններու մասին: Մինչ այդ, մոլար ու սուր ուսուցիչները իրենց աշխատանքը երբ է որ կ'ընեն «օր-ցերեկով», առանց ամչնալու:

Բայց ի՞նչ պարահեցաւ: Ուրկէ՞ են այս մարդիկը: Պեպրոս Առաքեալ կ'ըսէ. «**Ուղիղ ճամբան ձգելով՝ մոլորած են, հեպտելով Բեռի որդի Բաղասմի օրինակին, որ ուզեց անիրաւութեամբ դրամ շահիլ**» (15 հմբ): Անոր համար ալ, Պեպրոս Առաքեալ կը զգուշացնէր, ու այսօր ալ մեզմէ իւրաքանչիւրը կը զգուշացնէ, որպէսզի ուղիղ ճամբան ձգելով չմոլորինք: Այսպէս ալ իր նամակը պիտի աւարտէ ըսելով. «**Ուստի դուք, սիրելիներ, սկիզբէն այս բաները գիտնալով՝ զգոյշ եղէք, որ չըլլայ թէ անբարոյ մարդոց մոլորութեան հեպտիք եւ ձեր վարաստութիւնը կորսնցնէք: Այլ, մեր Տիրոջ եւ փրկչին՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովն ու գիտութեամբը աճեցէք**» (3:17-18): Պեպրոս Առաքեալ Բաղասմի օրինակը կը բերէ (Թուոց 22:4-25), ինչ որ հեթանոսական, սեռային սանձարձակ երեւոյթներու փանելու Իսրայէլի ժողովուրդը, նոյնպէս ալ այս սուր ու մոլար ուսուցիչները նոյն երեւոյթին հեպտելով կ'ուզեն մոլորեցնել, նաեւ իրենց դրամասիրութեան ցանկութեան հեպտելով: Բայց Քրիստոս յստակօրէն պիտի ըսէր Իր աշակերպներուն, երբ քարոզութեան պիտի դրկէր գիրենք. «**Երբ կ'երթաք, քարոզեցէք՝ թէ երկինիք արքայութիւնը մօտեցած է: Հիւանդները բժշկեցէք, բորոպները մաքրեցէք, չար ոգիները հանեցէք: Չրի առիք, ձրի ալ փուէք: Չեր գօտիներուն մէջ ոչ ոսկի, ոչ արծաթ եւ ոչ ալ պղինձ դրամ ունեցէք: Ճամբու համար ոչ պարկ առէք, ոչ ատելորդ հագուստ, ոչ կօշիկ եւ ոչ գաւազան: Քանի աշխատողը արժանի է իր օրապահիկին» (Մատթ 10:7-10):**